

Բառարան

«Ի՛նչ քաջություն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունե՞ս՝ քե՛ֆ արա...»

Քաջ Նազար

Վերջապես Քաջ Նազարը որոշեց սովորել հսկաների լեզուն: Բանից պարզվում է Նազարը դժվարանում է արտասանել հարևան բաղաձայններ պարունակող բառերը: Այդ պատճառով թագավորության լեզվաբաններին հրամայվեց վերանայել լեզվի բառերը և կազմել նոր բառարան՝ առանց այդ անիծյալ, դժվար արտասանվող բառերի:

Այժմ լեզվաբաններին հետաքրքրում է, թե մինչև **N** երկարություն ունեցող և հարևան բաղաձայններ չպարունակող քանի բառ է կարելի հորինել հսկաների այբուբենում:

Հսկաների այբուբենը բաղկացած է a-ից z լատինատառ փոքրատառերից, որոնցից ձայնավոր են a, e, i, o, և u տառերը: Այսինքն 26 տառերից 5-ը ձայնավոր են, 21-ը՝ բաղաձայն:

Մուտք

Մուտքի միակ տողում տրված է **N** թիվը ($1 \leq N \leq 10^9$):

Ելք

Ելքում հարկավոր է արտածել լեզվաբաններին հետաքրքրող թիվը 10^9+7 -ի վրա բաժանելիս ստացվող մնացորդը:

Օրինակներ

Մուտքը.

1

Ելքը.

26

Մուտքը.

2

Ելքը.

261

Մուտքը.

3

Ելքը.

4166

Օրինակների բացատրություն

Առաջին օրինակում թույլատրելի են մեկ տառից բաղկացած բոլոր բառերը:

Երկրորդ օրինակում թույլատրելի են 1 երկարություն ունեցող բոլոր բառերը, 1 ձայնավոր և 1 բաղաձայն պարունակող բոլոր բառերը և միայն ձայնավորներից բաղկացած, 2 երկարություն ունեցող բառերը $26+55+521+215=261$